

բբբ



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 05 » 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 023 - 25

Նախաձեռնող՝

«ԻՍԻ Քաուրազու» ՍՊԸ  
ք. Երևան, Թումանյան 8, 504 ս.

Գործունեությունը՝

Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11  
և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ  
համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի,  
ավտոկայանարեղիի և հասարակական նշանակության  
հարվածամասի կառուցում  
Կոպայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 023 - 25**

**«05» *հունիս* 2025թ.**

**Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղիի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

|                      |  |
|----------------------|--|
| Նախաձեռնող՝          | «ԻՍԻ Բաուքադու» ՍՊԸ  |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝      | Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք,  |

**Ներածական մաս.** Նախատեսվում է Չարենցավան համայնքի Երիտասարդության փ. 6/11 և 6/12 հասցեներում կառուցել ժամանակակից լուծումներով բազմաֆունկցիոնալ համալիր՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենք, ավտոկայանատեղի և հասարակական նշանակության հատվածամաս: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի:

**Նկարագրական մաս.** Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել 2023 թվականի նոյեմբերի 30-ին Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի կողմից տրված (N 99) նախագծման թույլտվությունը, 2023 թվականի հուլիսի 27-ի 07-007-0026-0005 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 27072023-07-0089 վկայականը և 2023 թվականի օգոստոսի 9-ի 07-007-0039-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 09082023-07-0129 վկայականը:





Նախատեսվում է կառուցել 12 և 14 հարկանի մասնաշենքերից բաղկացած բնակելի համալիր որը կունենա նախակրթարան, ժամանացային վայրեր, ճամուղիներ, անվանվելու է Լուսավան բնակելի թաղամաս, հարակից է լինելու Չարենցավան քաղաքի 3-րդ հիմնական դպրոցին, բժշկական կենտրոնին և Սուրբ Փրկիչ եկեղեցուն: Եկեղեցին շինհրապարակի պատից կունենա 40 մ, բուն շինհրապարակից և կառուցվող մոտակա շենքից համապատասխանաբար 157 մ և 112 մ հեռավորություն:

Նախատեսվող գործունեության հողամասի մակերեսը կազմելու է 3.2217 հա և 5.38249 հա, ընդհանուր 8,60419 հա, կառուցապատման մակերեսը՝ 15,000 մ<sup>2</sup>, կանաչապատման մակերեսը՝ 48350մ<sup>2</sup>, ստորգետնյա ավտոկայանատեղիի մակերեսը՝ 26,000 մ<sup>2</sup>, անջրանցիկ մակերեսը՝ 22,691 մ<sup>2</sup>, բնակարանների քանակը՝ 1500-1600: Համալիրն ունենալու է միասնական ստորգետնյա երկհարկանի ավտոկայանատեղի՝ նախատեսված 730-750 մեքենայի համար: Ավտոկայանատեղիներն ապահովված են լինելու հրդեհամարման և հրդեհաշիջման, ծխահեռացման համակարգերով, սանհանգույցներով: Լինելու են ոչ բնակելի հասարակական տարածքներ՝ նախատեսված բազմաբնույթ սպասարկման ոլորտի համար:

Ստորգետնյա հարկերն անհրաժեշտության դեպքում կարող են ծառայել բնակչության համար որպես ապաստարան: Մասնաշենքերի տանիքները լինելու են հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Շենքը ունենալու է բարձր ջերմամեկուսացման աստիճան, պատուհանի ապակիները՝ էներգախնայող, իսկ պրոֆիլները թերմոայլումինե: Շենքի տանիքում տեղադրվելու են արևային վահանակներ:

Շենքը ջեռուցվելու է տանիքում տեղադրված կենտրոնացված կաթսայատնից, իսկ հովացումը լինելու է անհատական:

Բնակելի համալիրն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանական միջոցառումներով, ծայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով: Շենքերն ապահովված են լինելու տարհանման ելքերով:

Համալիրի գազամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Ջերմամատակարարումն իրականացվելու է գազով աշխատող տուրբո ջրատաքացուցիչ կաթսաների միջոցով՝ այլումինե մարտկոցներով: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպիլենային խողովակներով՝ հատակի միջով բաշխվելու է ջեռուցման մարտկոցներին: Բազմաբնակարան բնակելի համալիրի օդափոխությունը կատարվելու է խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից՝ բնական՝ 100 մմ, Ø125 մմ և Ø160 մմ օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանալու են դեպի տանիք:

Շինարարության և շահագործման փուլերում շենքերի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 5 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով: Աշխատողների համար նախատեսվում է տեղադրել բիոզուգարան՝ լվացարանով: Բիոզուգարանի մարդու կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:





Շահագործման փուլում կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռացվելու են գոյություն ունեցող քաղաքային կոյուղու ցանց: Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է կառուցել  $d=100-50$ մմ տրամագծի պոլիվինիլքլորիդե խողովակներից:

Հարթ տանիքներից անձրևաջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանալու են բակային ցանց, որը միանալու է անձրևատար կոյուղու փողոցային հեղեղատարին:

Բնակելի շենքերի արտաքին էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն՝ տեխնիկական պայմանի:

Բակային հատվածում նախատեսվում են նաև բացօթյա ավտոկայանատեղիներ, խաղահրապարակներ, հանգստի ակտիվ և պասիվ գոտիներ, ճեմուղիներ, զրուցարաններ, կանաչապատ պուրակ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝  $48,350$  մ<sup>2</sup> տարածքում: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է, որ կառաջանա՝  $62\ 940$  մ<sup>3</sup> հողային հանույթ, որից  $18\ 882$  մ<sup>3</sup> հանույթն օգտագործվելու է հետլիցքի նպատակով, իսկ մնացած  $44\ 058$  մ<sup>3</sup> հողային զանգվածը տեղափոխվելու է աղբավայր տեղական ինքնակառավարման մարմնի հետ համաձայնեցված: Տարածքում առկա է բերրի հող՝  $1-1.5$  սմ շերտով:

Շինարարական աղբը՝ մոտ  $2300$  մ<sup>3</sup> ծավալով, կուտակվելու է շինհրապարակում նախատեսված վայրում, պարկերի մեջ: Կենցաղային աղբը կառուցապատման փուլում նախատեսվում է, որ կկազմի  $19200$  կգ/տարի: Շինարարական և կենցաղային աղբը Չարենցավանի համայնքապետարանի հետ համաձայնեցված տեղափոխվելու է Չարենցավանի աղբավայր:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- Աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- շինհրապարակը ցանկապատելու է, կառուցվող շենքերը ծածկվելու են համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,
- փոշենստեցման նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա,
- առանձին պիտանելի թափոններն օգտագործվելու են շինարարության փուլում, մետաղական մասերն առանձնացվելու են և որպես մետաղի ջարդոն հանձնվելու են հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,





- շինարարական աշխատանքներում նախատեսվում է ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,

- Բոլոր մեքենաները պետք է ապահովված կլինեն համապատասխան խլացուցիչներով:

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը/սուսինձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

- բացառվելու է շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- ստորգետնյա հատվածում՝ թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մոտ 2 000 000 ՀՀ դրամ:

**Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.**

-մթնոլորտային օդ կատարվող արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամեն օր,

-փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

-հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ՝ ոչ ուշ քան երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

-աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ ոչ ուշ քան երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղիի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լուսմներ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Չարենցավանի համայնքապետարանը, որոնց կողմից ստացված կարծիքները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:





## Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Չարենցավանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
7. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
9. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:
10. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԻՍԻԻ Քաուբազու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղիի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության



գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան